

ռանց մտոյ է» . վասն զի անպատեհ է , կ'ըսէին , Յարութեան ու Մենդեան նախատօնակը պահոց միւս օրերուն հաւասարեցնել (նոյն , 335-6) :

Անուարգեցւոյն ջանքը չափաւոր արդիւնք մ'ունեցաւ , ընդունուելով Կիլիկիոյ եւ ուրիշ քանի մը թեմերու մէջ միայն : Այնպէս որ Ստ . Որբելեանի յաջորդն ու տոհմակիցը Յովհաննէս՝ կը շարունակէր բողոքել անոր դէմ , որուն պատասխանելով Զաք . Մործորեցին , կը ջատագովէր նոր կարգադրութիւնը (Մրծ . 9) : Զայս հաստատեցին Ստոյ 1307ին եւ Ատանայի 1316ին ժողովները , պատուիրելով ձկամբ ու ձիթով միայն լուծել երեք ճրագալոյցներն ալ (Պալճ . 274 , '95) . եւ զոր Ստոյ 1342ին ժողովը կը յիշեցնէր Բենեդիկտոս ժԲ պապին (Տուռ . 371) : Բայց ազգին յամառութիւնն յաղթանակ տարաւ այդ բոլորին դէմ , եւ ժԵ դարու սկիզբը Տաթեւացին դեռ սովորական կը գտնէր տոհմային հին նաւակատիքը (Քրգ . ձմր . 31 , 603 . Հրց . 554) : Աբգար դպիր 1564ին կը գրէր առ Պիոս Գ՝ թէ աւագ շարաթուն արեւու մտնելէն վերջ «ձուս եւ ձկուս եւեթ ճաշակեմք» (Զմչ . Գ , 522) : Իսկ 1650ին ի Կ . Պոլիս գրուած սօնացոյց մը սա ճաշացուցակը կու տայ .